***Էմմա Կոստանդյան**, Դրվագներ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի կյանքից և գործունեությունից, Երևան, Պատմության ինստիտուտ, 2015, 341 էջ*

Պատմական գիտությունների դոկտոր, երջանկահիշատակ Էմմա Կոստանդյանը (1934-2014) այն սակավաթիվ պատմաբաններից էր, ում գիտական ժառանգության գերակշռող մասը, չնայած նրա բազմաբովանդակ և տարաբնույթ հետաքրքրություններին, նվիրված էր Հայոց եկեղեցու և դրա երախտավորների գործունեության պատմության ուսումնասիրությանը: 1958 թվականից անդամագրվելով ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի վաստակաշատ աշխատակազմին՝ Է. Կոստանդյանը սկսել է ակոսել հայոց պատմության անդաստանը և ուսումնասիրել պետականության երկդարյա բացակայության պայմաններում Հայոց եկեղեցու ծավալած հայրենանվեր գործունեության պատմությունը:

Գարեգին Սրվանձտյանցի և Մկրտիչ Խրիմյանի գործունեությանը նվիված նրա մենագրությունները[1] մեծ ընդունելության են արժանացել մասնագետների և ընթերցողների շրջանում՝ հեղինակի համար ապահովելով մեծ ճանաչում հայ պատմագիտության միջօրեականներում: Նշենք ի դեպ, որ Հայոց եկեղեցին ևս բարձր է գնահատել Է. Կոստանդյանի գիտական ներդրումը և 2012 թ. նրան պարգևատրել իր բարձրագույն՝ «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանով:

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանին (1841-1914) նվիրված գրախոսվող աշխատությունը բաղկացած է երկու մասից, որոնք ընդգրկում են թեմային անմիջականորեն առնչվող՝ տարբեր հանդեսներում տպագրված հեղինակի գիտական հոդվածները և հիմնահարցը ներառող անտիպ նյութեր:

Բարեխիղճ և փորձառու ուսումնասիրող հեղինակը սույն աշխատությունում արխիվային վավերագրերի, մեծաքանակ սկզբնաղբյուրների, ժամանակի մամուլում սփռված նյութերի, հուշագրությունների և գիտական

---

[1] Տե՛ս **Կոստանդյան Է.**, Գարեգին Սրվանձտյանց (կյանքը և գործունեությունը), Երևան, 1979, *նույնի*՝ Մկրտիչ Խրիմյան: Հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, 2000:

ուսումնասիրությունների հիման վրա ներկայացրել է եկեղեցական գործիչ, աստվածաբան, հայագետ, պատմաբան, բանասեր, հրապարակախոս, ազգային անխոնջ գործիչ Մ. Օրմանյանի հասարակական-քաղաքական, հոգևոր և գիտական գործունեության մի շարք հիմնահարցեր:

Աշխատության առաջին մասում հեղինակն ընդհանուր գծերով ներկայացրել է Մ. Օրմանյանի կենսագրությունը, շեշտել նրա ապրած ժամանակաշրջանում հազվադեպ հանդիպող կարևոր մի հանգամանք՝ Մ. Օրմանյանի ստացած փայլուն կրթությունն ու իմաստասիրության, աստվածաբանության, եկեղեցական իրավագիտության ոլորտների բազմակողմանի իմացությունը: Ավելի հանգամանորեն քննել է նրա հակակաթոլիկական թեզերը, ներկայացրել մղած պայքարը հայությանը կաթոլիկության մեջ ձուլելու պապականության նկրտումների դեմ, պատճառաբանել դրանց իմացության կարևորությունը հայ ժողովրդի համար: Ըստ հեղինակի՝ հակակաթոլիկական պայքարից բացի, Մ. Օրմանյանի հաջորդ ազգանվեր գործողությունները եղել են Օսմանյան կայսրության մի շարք հայաբնակ վայրերում ազգասիրական թեմաներով բանախոսությունները: Ի դեպ, նա առանձնացնում է 1879 թ. Ուսկյուտարում, Սամաթիայում և Օրթագյուղում՝ «Հայուն անցեալն ու ներկայն ու ապագայն», «Հայության հոգին», «Հայ երիտասարդութիւն», «Հայ ազգութիւն», «Կարոտ ենք» և այլ թեմաներով նրա կարդացած դասախոսությունները:

Է. Կոստանդյանը հատուկ վերաբերմունք է դրսևորել Մ. Օրմանյանի հայրենասիրական ոգով տոգորված բանաստեղծություններին, քննարկել է և լուսաբանել նաև նրա պատմագիտական հայացքները, արժանին մատուցել Մեսրոպ Մաշտոցին ու գրերի գյուտին նվիրված օրմանյանական հետազոտություններին:

Է. Կոստանդյանը սկզբունքային և անաչառ դիրքերից ներկայացրել է Կարինում հոգևոր առաջնորդ եղած ժամանակ Մ. Օրմանյանի՝ Թորթումի, Կիսկիմի, Սպերի և արևմտահայկական այլ գավառներում ծավալած ազգանվեր գործունեությունը, ինչպես նաև նրա ակտիվ մասնակցությունը «Պաշտպան հայրենյաց» գաղտնի կազմակերպությանը, իսկ դրա բացահայտումից հետո՝ նրա գործադրած եռանդուն ջանքերն այդ կազմակերպության ձերբակալված անդամներին ազատ արձակելու գործում[1]:

---

[1] Երբ 1882 թ. նոյեմբերին ոստիկանությունը պատահաբար բացահայտում է կազմակերպությունը, և ձերբակալվում են շուրջ 72 անձինք, կասկածները տարածվում են նաև Մ. Օրմանյանի վրա: Վերջինս դրանք փարատելու և ձերբակալվածներին ազատ արձակելու համար սկսում է ժխտել իր կապը այդ կազմակերպության հետ: Ընդգծենք, որ չնայած դրան՝ բոլոր ժամանակակիցները գիտեին նրա կազմակերպական դերի մասին: Տարիներ անց դա խոստովանում է նաև Գրիգոր Զոհրապը, որն իր «Ծանոթ դեմքերի» մեջ գրել է. «Օրմանյան սրբազան մեր եպիսկոպոսներուն երիտասարդը և մեր երիտասարդներուն եպիսկոպոսն է» (տե՛ս **Զոհրապ Գ.**, Երկեր, հ. Զ, Երևան, 2004, էջ 67):

Սկզբնաղբյուրների վերլուծության հիման վրա հեղինակը բավական մանրամասնորեն ներկայացրել է Մ. Օրմանյանի՝ Էջմիածնում ծավալած գործունեությունը: 1886 թ. հունիսի 8-ին Գարեգին Սրվանձտյանցի հետ Մայր աթոռ Ս. Էջմիածնում Մակար Ա. Թեղուտցի կաթողիկոսի կողմից օծվելով եպիսկոպոս՝ նա նշանակվել է Գևորգյան ճեմարանի աստվածաբանության դասախոս: Է. Կոստանդյանը նշում է, որ չնայած Մ. Օրմանյանը ճեմարանում դասավանդել է ընդամենը մեկ ուսումնական տարի, այդուհանդերձ գիտական իր մեծ ավանդն է ներդրել ճեմարանի սաների ուսումնադաստիարակչական գործում, նշանակալի մասնակցություն ունեցել նոր ուսումնական ձեռնարկների ստեղծման աշխատանքներում: Սակայն Մ. Օրմանյանի ազգանվեր գործունեությունից անհանգստացած ցարական իշխանությունները նրան արտաքսել են Էջմիածնից: Ըստ Է. Կոստանդյանի՝ դրա հիմնական պատճառը նրա կապերն են եղել Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությանը:

Աշխատության հաջորդ բաժնում ներկայացված է Մ. Օրմանյանի գործունեությունը Արմաշի դպրեվանքում: Այստեղ որպես փոխվանահայր պաշտոնավարած վեց տարիների ընթացքում իրականացել են նրա վաղեմի երազանքները. այն, ինչ նա փորձել էր կյանքի կոչել Էջմիածնում, հաջողվել է այստեղ՝ Արմաշում: Նրա մանկավարժական գործունեության առնչությամբ Է. Կոստանդյանը հատկապես առանձնացրել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում և Արմաշի դպրեվանքում ծավալած նրա ազգանպաստ գործունեությունն ու կարևոր դերակատարությունը ուսումնական գործառույթների իրականացման խնդրում: Մի քանի առիթներով նա ընդգծել է նրա աննկուն կեցվածքը, սկզբունքային մոտեցումներն ու սրտացավ վերաբերմունքը երիտասարդ սերնդի հայեցի դաստիարակության կարևորագույն խնդիրների վերաբերյալ:

Առանձնակի սրտացավությամբ և նյութի խորիմացությամբ է հեղինակը ներկայացրել Մ. Օրմանյանի կյանքի զարդապսակը կազմող պատրիարքության ժամանակաշրջանը[1]: Չմոռանանք շեշտել, որ պատրիարքական ընտրությանը նախորդել էին մեր ժողովրդի համար դժնդակ օրերը, աբդուլհամիդյան ճնշումների դեմ բարձրացել էր ազգային-ազատագրական շարժումների ալիքը, 1894 թ. Սասունի ինքնապաշտպանական մարտերին, 1896 թ. Վանի ինքնապաշտպանությանը ի պատասխան՝ հետևել էին արևմտահայության զանգվածային կոտորածները:

Է. Կոստանդյանը գրում է, որ Աբդուլ Համիդ II-ը տեղյակ էր 1880-ական թվականներին Մ. Օրմանյանի ազգասիրական գործունեությանը. նա այդ առիթով ասել է. «Թող իւր ազգը սիրե, բայց իրեն դեմ սուր չքաշե»[2]: Բարձր

---

[1] Մ. Օրմանյանը 57 ձայների 47 քվեով 1896 թ. նոյեմբերի 6-ին 55 տարեկանում ընտրվել է պատրիարք և պաշտոնավարել 12 տարի:

[2] **Օրմանեան Մ.**, Խոհք և Խօսք, «Յետմահու հրատարակութիւն», Երուսաղեմ, 1929, էջ 171:

գնահատելով պատրիարք Օրմանյանի հայանպաստ ջանքերը՝ հեղինակն արձանագրում է, որ նրա գործունեության արդյունքում շուրջ 1200 բանտարկյալներ և մահվան դատապարտվածներ ընդհանուր ներում են ստացել: Իսկ հետո նա արել է ամեն հնարավորը, որպեսզի չկրկնվեն 1894-1896 թթ. արևմտահայության զանգվածային կոտորածները: Նա շեշտում է, որ Աբդուլ Համիդի հակահայկական գործողությունները կանխելու համար Մ. Օրմանյանի դիվանագիտական ջանքերը վկայում են նրա հեռատեսության մասին: Ներկայացնելով նրան իբրև հոգեբան-փիլիսոփայի՝ հեղինակն ընդգծում է, թե ինչպիսի հմտությամբ է նա բնութագրել Աբդուլ Համիդի վարչական ընդունակությունների դրական և բացասական կողմերը: Վերջինս գահ էր բարձրացել Աբդուլ-Ազիզի և Մուրադի սպանությունների կազմակերպումից հետո և ըստ այդմ դարձել խիստ կասկածամիտ բոլորի նկատմամբ:

Հետաքրքիր դիտարկում է կատարել Է. Կոստանդյանը. ամբողջ էությամբ ատելով Աբդուլ Համիդին՝ Մ. Օրմանյանը միաժամանակ կոչ էր անում լավ ճանաչել թշնամուն և իրատեսորեն ընդգծում էր սուլթանի վարչական կարողությունները, դիվանագիտական հմտությունը, մեծ աշխատասիրությունը, խորաթափանցությունը: Ըստ Մ. Օրմանյանի, նշում է իրատես հետազոտողը, կայսերական գահի երեք ոտքերը հաստատուն էին, իսկ կաղացող չորրորդ ոտքը նա համարում էր իր հպատակ ժողովրդի հանդեպ ցուցաբերված վերաբերմունքը, կասկածամիտ, անձնական կյանքում ծայրահեղության հասած երկչոտ սուլթանի պահվածքը:

Շարունակելով ներկայացնել Աբդուլ Համիդի էությունը՝ Է. Կոստանդյանը նշում է, թե ինչպես էր նա սարսափում հայերից, իսկ Մ. Օրմանյանի՝ նրան հանդարտեցնելու փորձերը չէին փոխում իրավիճակը: Սուլթանը կասկածներ էր տածում նաև պատրիարքի նկատմամբ և աշխատում սիրաշահել նրան: Միաժամանակ սուլթանը շարունակում էր իր հակահայկական գործողությունները՝ սաստկացնելով հալածանքները մտավորականների նկատմամբ, հավելելով հարկերը, արգելելով Արևմտյան Հայաստանի հայության ազատ երթևեկը և այլն: Հեղինակն ընդգծում է, որ հաշվի չառնելով սուլթանի՝ պատրիարքի համակրանքը շահելուն միտված քայլերը, Մ. Օրմանյանը երբեք չի դադարել գանգատի և բողոքի ձայնը բարձրացնել կեղեքիչների վարած հակահայկական քաղաքականության դեմ: Դրա վառ ապացույցներն են պատրիարքի մի քանի հրաժարականները, որոնք աշխատությունում մանրակրկիտորեն ուսումնասիրված են:

Բարձրակարգ գիտականությամբ ու սպառիչ են ներկայացված նաև Մ. Օրմանյանի պայքարը ցարական կառավարության՝ 1903 թ. հունիսի 12-ի Հայոց եկեղեցու ունեցվածքը բռնագրավելու օրենքի դեմ, ինչպես նաև Կիլիկիո կաթողիկոսության, Աղթամարի կաթողիկոսական տեղապահի և Երուսաղեմի պատրիարքության հետ ունեցած նրա բարդ հարաբերությունները:

Հեղինակը բարձր է գնահատել 1896-1908 թթ. Օրմանյան պատրիարքի ձեռնարկած մի շարք բարեգործական ծրագրերը հատկապես 1894-1896 թթ.

կոտորածներից մազապուրծ հայ գաղթականների օժանդակության խնդրում:

Մ. Օրմանյանի պատրիարքության տարիներն ավարտվել են 1908 թ. երիտթուրքական բուրժուական հեղափոխությամբ: Իրադարձությունների մասին եղած նյութերին քաջատեղյակ հեղինակը գրում է, որ 1908 թ. հուլիսի 16-ին Կ. Պոլսում կազմակերպված բազմամարդ ցույցի մասնակիցները ներխուժել են պատրիարքարան և Մ. Օրմանյանին հայտարարել պաշտոնանկ ու դատի ենթակա ամբաստանյալ: Պատրիարքի դատապաշտպանի դերը ստանձնել է Գրիգոր Զոհրապը, ով փաստարկված ժխտել է նրա՝ Աբդուլ Համիդին ստրկամիտ ծառայելու հանգամանքը: Ավելին, նա վկայել է, որ «իբրև Կարնո առաջնորդ՝ հեղափոխական գործունեություն մը ունեցավ: Անուրանալի է, որ Կարնո մեջ առաջին ցնցումը իր օրովը եղավ, ու շարժման գլուխ ինքը գտնվեցավ: Այդ պատճառով ալ Օրմանյան սրբազան Պոլիս բերվեցավ և հարցաքննութեան ենթարկվելե հետո հազիվ կրցավ իր օձիքը ազատել»[1]: Է. Կոստանդյանն անթաքույց համակրանքով է նշում, որ հմուտ իրավաբան Գրիգոր Զոհրապը բարձր մակարդակով է պաշտպանել նրա իրավունքները, ինչի շնորհիվ 1913 թ. Օրմանյան սրբազանը արդարացվել է: Հետագայում նրան տարբեր գավառներում (Ադանա, Եգիպտոս) հոգևոր առաջնորդի պաշտոններ վարելու առաջարկություններ են եղել, սակայն նա գերադասել է գիտական գործունեությունը:

Աշխատությունն ավարտվում է Մ. Օրմանյանի վերջին օրերի մասին շարադրանքով: Երուսաղեմում էր նա գտնվում, երբ սկսվել է Առաջին աշխարհամարտը, որի ընթացքում է տեղի ունեցել հայ ժողովրդի ամենամեծ ողբերգությունը՝ Մեծ եղեռնը: Պատրիարքության հոգևորականների հետ Դամասկոս աքսորված Մ. Օրմանյանն այնտեղ ավարտին է հասցրել իր «Խոհք և խօսք» արժեքավոր աշխատությունը, իսկ նոյեմբերի 19-ին 78 տարեկան հասակում կնքել է մահկանացուն:

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

---

[1] Տե՛ս Կարծիքներ Օրմանյանի մասին // «Էջմիածին», 1961, թիվ 5, էջ 20: